

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՏԱՄԱՆԵՒՎԵՅԱԿՄՍԵԱՅ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԵԱՆՅ

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԱՂՔԱՏԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԶՈՐԻՅ ՔԱՂԻՅ ԳՈՒՄ-ԳԱՐՈՒԻ

1891 Յունվար է ց1 Մայիսի 1892

327



Կ. ՊՕԼԻՍ

ՅԳԱԳՐԱՆՈՒՆ, ՎԻՃԱԳՐԱՆՈՒՆ Խ. ԿԱԳՄԱՆՈՒՆ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1892



Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի

Պատկառելի Հիմնադրաց ժողովոյ

Աղքատատէր Ընկերութեան

Գում-Գարուի Միացեալ Չորից Թաղից

Տնօրէն Խորհուրդս պարտ անձին կը համարի այսօր իւր պաշտօնավարութեան, որ կ'սկսի 1891 յունվար 1է եւ կը յանդի 1892 մայիս 1, եւ իւր գործառնութեանց համարատուութիւնը մատուցանել Պատկ. ժողովոյ :

Աոյն Տեղեկագրով Խորհուրդս իւր կազմութեան եւ մատակարարութեան վրայ տեղեկութիւններ տալէ զկնի կը ներկայէ նաեւ հասութից եւ ծախուց մանրամասնութիւնք եւ հաշուեկշիռը :

Խորհուրդս պատիւ ունի նաեւ կցել աոյն Տեղեկագրիս Ընկերութեանս յատուկ բծիշկ Մեծապատիւ Տօքթէօր Ռօպէնսօն Էֆէնտի մի տեղեկագիրը որ կը պարունակէ աոյն շրջանի մէջ դարմանուած հիւանդաց եւ անոնց հիւանդութեանց վրայ շահեկան տեղեկութիւններ, արժանի լուրջ ուսումնասիրութեան :

## Կ Ա Ջ Մ Ա Ի Ք Ի Ի Ն

Պատկառելի ժողովդ վերջին անգամ Տնօրէն Խորհրդոյ անգամ ընտրած էր հետեւեալ էֆէնտինները .

Գառնիկ	Գավաճեան	Միհրան	Իւսիլկեան
Գէորգ	Կիւրեղեան	Յակօբ	Գորեան
Եղիա	Վէգիբեան	Նասիպ	Գարագաւեն.
Խաչիկ	Մարգարեան	Սեփիան	Քէօսէեան
Խաչիկ	Խաննեան	Սենեֆերիմ	Տիլսիզեան
Մկրտիչ	Կարապետեան	Սիմօն	Հանչէր

Յորոց Եղիա Վէգիբեան եւ Յակօբ Գորեան էֆէնտիք ի սկզբան անդ չընդունեցին անդամակցութիւնը, իսկ Միհրան Իւսիլկեան, Սիմօն Հանչէր, Գէորգ Կիւրեղեան, Մկրտիչ Կարապետեան էֆէնտիք 6—7 ամիս շարունակելով Տնօրէն Խորհրդոյս անդամակցութիւնը, հրատարեցան եւ իւրեանց հրատարագրերը մատուցուեցան պատուարժան Դիւանիդ . Հրատարելոց տեղ Պատ. Դիւանդ հետեւեալ էֆէնտինները աւելցուց Տնօրէն Խորհրդոյս վրայ առժամանակեայ կերպիւ .

Արիստակէս	Գրիգորեան	Միհրան	Պօնալեան
Գրիգոր	Սուճեան	Կարապետ	Պարոնեան
Գարեգին	Տէմիրճեան	Նշան	Զպուգճեան

Հետեւաբար Խորհուրդս վերակազմուեցաւ հետեւեալ անձերով եւ պաշտօններով,

Ա. Արեւուպետ	Նասիպ	էֆէնտի	Գարագաչեան
Բ. Արեւուպետ	Գրիգոր	„	Սուճեան
Ա. Արեւուգոյիք	Սենեքերիմ	„	Տիլսիզեան
Բ. Արեւուգոյիք	Կարապետ	„	Պարոնեան
Հաշտակալ	Խաչիկ	„	Պանճեան
Մարտիրոս	Գարեգին	„	Տէմիրճեան
Գանչուպետ	Սեփիան	„	Քէօսէեան

ԽՈՐՀՐԴԱԿԱՆՔ

Գառնիկ	էֆ.	Գաղափեան
Նշան	,,	Զպուգճեան
Միհրան	,,	Պօսնալեան
Արիստակէս	,,	Գրիգորեան
Խաչիկ	,,	Մարգարեան

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՓԻՒՆ

Խորհուրդս այս շրջանի մէջ դարմանեց երկսեռ  
(687) զեց հարիւր ութսուն եւ եօթ հիւանդներ, յորոց

342ր՝ Մայր եկեղեցւոյ թաղէն

122ր՝ Եէնի դարուի թաղէն

107ր՝ Կէտիկ փաշայի թաղէն

61ր՝ Էթ Մէյտանի թաղէն

35ր՝ Զանաղան պանդոկներէ (պանդուխտներ)

20ր՝ Գում Գարուի զրսի թաղէն

---

687 Նամադումար

Սոյն հիւանդներէն 6ր՝ Օսմանեան ազգէն են իսկ  
3ը Յոյն :

Սոյն հիւանդաց եւ հիւանդութեանց բնութեան եւ  
հանդամանաց վրայ ինչպէս արդէն ըսուեցաւ, հարկ  
եղած տեղեկութիւնները ստանալու համար պէտք է  
զիմեկ բժշկին յարակից տեղեկագրոյն :

## Ճ Ա Ս Ո Յ Ք Ի Ք

Գ Ա Ն Ձ Ա Ն Ա Վ

Սորհուրդս քանիցս փորձեց օժանդակ Մասնախումբ մը կազմել, եւ այս նպատակաւ մերձակայ թաղերու երիտասարդ ազգայիններն հրաւիրեց, յորոց կազմեց մի Մասնախումբ կիրակնօրեայ գանձանակի շրջագայութիւնն ստանձնելու համար . բայց դժբաղդաբար այս Մասնախումբ հետզհետէ կազմալուծեցաւ անշուշտ մեզ անձանօթ պատճառներով, որով գանձանակի շրջագայութիւնը բազմաթիւ դժուարութեանց բաղխեցաւ . հետեւաբար գանձանակի հասոյթը մեր ակնկալութիւնը ի դերեւ հանեց . այս մասին թաղիս երիտասարդութեան անտարբերութեան վրայ Սորհուրդս իւր ցաւակցութիւնը յայտնելէ զատ ուրիշ բան չէ կարող ընել : Բայց այսու հանդերձ գտնուեցան, թուով ցանցառ, մի քանի աշխոյժ երիտասարդներ՝ որք անձնուիրաբար գանձանակի շրջագայութիւնը շարունակաբար ստանձնեցին, որով այս 16 ամսեայ շրջանին մէջ գանձանակի զուտ հասոյթ ունեցանք 8797 25 դրշ : Այս առթիւ Սորհուրդս պարտք կը համարի իւր շնորհակալիքը յայտնել սոյն ժրջան երիտասարդաց :

Բ Ա Ձ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Յ Ի Ն

Սոյն շրջանի մէջ ընդհանուր բաժանորդներէ գանձեալ է 7159 դրշ . որ մեր հասութից աղբիւրներէն գլխաւորն պարտ էր լինել . բայց մեր կամքէն անկախ պատճառներով նուազած է սոյն գումար :



Յարդ ունիւմք 260 բաժանորդ հետեւեալ ամսալը-  
նարներով.

90	բաժանորդ	1	դրշ.	ամսալճարով
120	„	2	„	„
20	„	3	„	„
1	„	4	„	„
26	„	5	„	„
2	„	10	„	„
1	„	20	„	„

260 համագումար, (ապառիկներ ալ շատ անգամ  
կը դիզուին).

**ԹԱՆԵՐԱԿԱՆ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՄ**

Անցեալ տարի Խորհուրդս հակառակ իր բաղձանաց չը կրցաւ տալ Լ՛նկերութեանս համար նպաստ մը, որով եւեթ պիտի ապահովուէր Լ՛նկերութեանս գոյութիւնը. զի ամսական հասոյթք երբէք չէին փակեր ծախքերն, եւ պահեստի դրամն ապառելու վրայ լինելով Լ՛նկերութեան գոյութիւնը վտանգի ենթարկուած էր: Այս կէտ Խորհրդոյս գլխաւոր մտածման առարկայ լինելով, շնորհիւ մի քանի պատուական անձնաւորութեանց այս տարի ի 1892 փետր. 26 կիրակի ցերեկ Բերայի Նոր Թատրոնին մէջ ընդ հովանաւորութեամբ Պետական Խորհրդոյ անգամ վսեմապատիւ Նուրեան Յովհաննէս Էֆէնտի տրուեցաւ թատերական ներկայացում մը, յորմէ զուտ շահ գոյացաւ Լ՛նկերութեանս 10,197 25 դրշ. որով եւեթ Լ՛նկերութիւնս կարողացաւ շունչ առնուլ եւ շարունակել սատարելու բազմաթիւ տառապելոց, որոց թիւն հետզհե-

տէ կը բազմապատկէր աղքատիկ թաղերու մէջ. Այս առթիւ Խորհուրդս քաղցր պարտք կ'զգայ իւր խորին շնորհակալիքը յայտնել առ Վսեմապատիւ Յովհաննէս Էֆէնտի Նուրեան որ իւր բնատուր մարդասիրութեամբ հաճեցաւ իւր բարձր հովանաւորութիւնը շնորհել սոյն ներկայացման եւ ամեն պարագայի մէջ զօրավիգ եղաւ մեր նպատակի իրականացման համար:

Ոչնուազ շնորհակալութեան արժանի են նաեւ Ազնուաշուք Արզեան Մանուկ, Հարենց Մաքսուտ, Էքսէրճեան Պօղոս Էֆէնտիք եւ այլք, որք սիրայօժար ընդունեցին Մասնախմբի անդամակցութիւնը եւ իւրեանց աջակցութիւնը չզլացան:

Պ Ն Ա Վ

Բաղդատմամբ նախորդ տարիներու ըստ բաւակահարի արդիւնաւոր եղած է ներկայ շրջանի Պնակի հասոյթն որ՝ արդիւնք է Չորից թաղից Պատուարժան Թաղական Խորհրդոց բարեյօժար աջակցութեան:

Ի ստորեւ կը նշանակեմք իւրաքանչիւր Եկեղեցւոյ պնակի հասոյթներն առանձինն:

Այլ եւ այլ տօնական օրեր

Մայր Եկեղեցւոյ բակը դրուած պնակէ	2727	12,5
Կէտիկ Փաշայի	1562	12,5
Եէնի Գարուի	1192	62,5
Գում Գարուի	763	
<b>Չորս Եկեղեցեաց պնակի հասութից</b>	<b>6244</b>	<b>87,5</b>

Ընդհ. գումարը վեց հազար երկու հարիւր քառասուն եւ չորս դրչ. երեսուն եւ հինգ փրյ.



ՉԱՆԱՉԱՆ ԵՌԻՒՐԱՏՈՒ ՌԵՓՈՒԵՆՔ

Տասնեւից ամսոց մէջ Ընկերութեանս զեղա-  
գործ Մանիկեան Պետրոս Էֆէնտի մէն մի ամիս  
տասնական հատ ձրիարար պատրաստած զեղազրոց  
խակական արժէքն 435

Մայր Եկեղեցւոյ Թաղական խորհրդոյ երկու տարուան նուէրք	400
Շիշմանեան Գէորգ պատուելիէ (հաւաքչի	108
Այլ ոմն " " (ձեռամբ)	108
Ճանֆէսճեան Գովհաննէս Էֆէնտիէ	60
Ուղունեան Մկրտիչ " "	40
Շէքէրճեան Յարութիւն " "	30
Գալաֆեան Նաչիտ " "	20
Պանեօյի վարձք, մասնաւոր նուէրք	47

Ընդհ. նուիրատուութեանց դումար 1268

Պատե՛հ առիթն է աստ մասնաւոր շնորհակալութիւն  
յայտնել Ազնուաշուք Յակոբ Էֆէնտի Պօյաճեանի որ  
ամեն անգամ յանձն կ'առնու մարդասիրարար Ընկե-  
րութեանս զեղազրերը իր տալարանին մէջ տպել  
տալով նուիրել Ընկերութեանս, երախտապարտ կա-  
ցուցանելով առ ինքն բաղմաթիւ անձեր :

ԴՐԱՄԱԿԱՆ ԷԱԷ

Ընկերութեանս ունեցած պահեստի դումարին  
տոկոսն եւ զրամական տարրերութեանց շահն եղած  
է 1513 50 դրշ.

Ծ Ա Թ Ք

Ղ Ն Ղ Օ Ր Ա Յ Ք

Որպէս յայտ է Ձեզ, ինչպէս նախորդ շրջանին  
նոյնպէս եւ այս անգամ կը շարունակեմք վճարել զե-

ղագործ Մանիկեան Պետրոս էֆէնտիի ամսական 200 դրշ. եւ դեղորէից իսկական արժէքը, յետ մանրամասն քննութեան արհեստակիցներու ձեռամբ :

Այս 16ամսեայ շրջանի մէջ վճարուած է դեղագործին

1359 դեղագործի փոխարժէք	4457	50
16 ամսուան 200 ականէն ամսական	3200	
	<hr/>	
	7657	50
որմէ 160 դեղագործին արժէքը նուէր է	435	դեղշ
	<hr/>	
Դեղորէից վճարեալ գումարը	7222	50

ԲՅԻՇՎ

Մեծապէս նպաստած է մեզ այն փութաջանութիւնն եւ յօժարամտութիւնն, զոր Ընկերութեանս յատուկ բժիշկ՝ Մեծ. Տօքթ. Ռօպէնսօն էֆէնտի անձնուիրաբար ցոյց կուտայ հարկ եղած ատեն զոյզն աստականաւ մը, որուն համար Խորհուրդս կը փութայ հրապարակաւ իւր շնորհակալիքը յայտնել :

16 ամսոց մէջ ամսական 400 դրշ.էն վճարուած է բժշկին 6400 դրշ. :

Բաց ի մեր յատուկ բժշկէն ստիպողական պարագայից մէջ մարդասիրաբար դարմանած են մեր հիւանդները հետեւեալ Մեծապատիւ բժիշկները, որոց կը փութամք մեր երախտագիտութիւնը յայտնել ՚ի դիմաց բազմաթիւ տառապելոց .

Վսեմաշուք Տօքթ. Փէշտիմալճեան փաշա

Մեծապատիւ	„	Հիւնքեարպէյէտեան էֆէնտի	
„	„	Տօպրաշեան	„
„	„	Ալթունեան	„
„	„	Ճէվահիրճեան	„
„	„	Գափամաճեան	„

Մեծ ապատիւ	„	Եւաղուպեան	էֆէնտի
„	„	Արապեան	„
„	„	Աճէմեան	„
„	„	Թիրեաքեան	„

Ոչ նուազ շնորհակալութեան արժանի է մասնաւորապէս ակնարոյժ Մեծ. Տօքթ. Էսմէրեան էֆէնտի, որուն երբ ներկայանայ մեր հիւանդն, նա ամենայն սիրով կը փութայ դարմանել զանի մարդասիրաբար, ընելով նաև հարկ եղած ձեռնտուութիւնը անոր ապաքինումը փութացնելու համար, եւ պարծանօք կը յայտարարէ Սորոուրդս թէ՛ իրեն յանձնարարուած ոչ մէկ հիւանդ ձեռնունայն ետ դարձած է. շատեր խաւարէն լուսաւոր աշխարհ մտած են ի շնորհս էսմէրեան էֆէնտի՝ որ իւր արհեստին ճարտարութեամբը նա մասնաւանդ իւր մարդասիրական եւ ազգասիրական խանդովը ազդովին զնահատման եւ գովեստից արժանի է :

Մ Ե Ռ Ե Ն

16 ամսեայ միջոցին կարօտ հիւանդաց մատակարարուած է 1287  $1\frac{1}{4}$  օխյ. կաթ, որոյ փոխան վճարուած է 2448 դր. եւ 788  $3\frac{1}{4}$  օխյ. միս, որոյ փոխան վճարուած է 5280  $3\frac{1}{4}$  դր., ուստի մնողեան համար ընդհանուր ծախուց գումարն է 7528  $3\frac{1}{4}$  դր. :

Ա Մ Ո Ի Խ

Նախորդ տարու ընէ մնացած 1000 օխյ. ածուխէն սպառած է, այսինքն կարօտ հիւանդաց բաշխուած է 870 օխյ. թէեւ սաստիկաշունչ եղանակներու մէջ

պէտք էր առաւել սպառել այս նիւթն, բայց երախտագէտ սրտիւ կը յայտարարեմք թէ բարեխնամ կայսերական կառավարութիւնը Գում Գարուի շրջակայ չորից թաղից ածուխ բաշխեց կարօտելոց ի ձեռն Թաղական խորհրդոց :

**ՀՌԱՆԴԱՅ ՀԱՄԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՄԱԽՐ**

Վերոյիշեալ ծախքերէ զատ հիւանդաց համար բժշկի երթեւեկութեան, ( որպէս Սիրքէճի, Էթ մէյտան եւն.) հիւանդները յԱզգ. հիւանդանոց փոխադրման, մտից, ածուխի կրողչէք, ըմպանօթ, եւ հիւանդաց այլ պիտանի գործիքներու համար, ծննդարբութեան ատեն բժշկաց խորհրդակցութեան համար այցելագիրն եւն. եւն. ընդհանուր ծախուց գումարն հասած է 827 25 դրչի :

**ԴՌԱՆԱԿԱՆ ՄԱԽՐ**

Ընկերութեանս գործառնութիւնք հետզհետէ ընդարձակելով գրագրի պէտքն զգալի եղաւ Խորհրդոյս. այս ընտրութիւնը կատարեցինք յանձին Նազարէթէֆ. Պօղոսեանի, ուսուցիչ Մայր Վարժարանի, ի ըսկզբան 50 դրչ. ամսաթոշակ վճարելով, իսկ ներկայ տարւոյս սկիզբէն 100ի բարձրացնելով սոյն գումարը, յանձնելով նմա Ընկերութեանս հաշուական, մատակարարական, դիւանական եւ այլ բոլոր գործերը :

Բաց ի գրագրի ամսականէ Դիւանական ուրիշ ծախքերն են, տպագրութեան, տետրակի, թղթի, սղահարանի, մեխանի, գրչի, ժամակոչաց նուէրի, սուրճի, շաքարի, լուցկիի, զանձանակի նորոգութեան, թամ-

բծնի, բոլիկրաֆի, մանկանց պատուաստի, հաւաքչի  
երթեւեկութեանց եւն. եւն. համար. ընդհանուր ծա-  
խուց գումարն է 1932 50 դրշ.

ԿԱՐԱՍԻՔ

Այս շրջանիս մէջ Խորհրդարանիս համար վեց նոր  
աթոռ գնուեցաւ եւ հին վեց աթոռներն նորոգուեցան  
որոց համար ծախսուեցաւ 10½ դրշ. նոյնպէս ձմրան  
մեծ վառարանի մը համար որոյ գինն ապառիկ թո-  
գուած էր նախորդ շրջաններէ, վճարեցինք 120 դրշ,  
գումար 22½ դրշ.

Նախորդ շրջաններէ մեզ ներկայացուած է 1340 50  
դրշի կարասեաց փոխարժէք մը, որ ներկայիւս իւր  
խսկական արժէքը բոլորովին կորուսած է. որովհետեւ  
կարասիք հետզհետէ սպառման եւ ջնջման ենթարկ-  
եալ են : Ուստի հարկ չդատեցինք այդ գումարը բար-  
դել սպարաստ գրամին վրայ.

Այժմ Խորհրդարանիս մէջ Ընկերութեանս կարասիք  
են Դրամարկղ մը, քանի մը գրասեղաններ, 12 աթոռ,  
վառարան, չուխայէ ծածկոց գրասեղանի, հիւանդաց  
համար գործածելի մի քանի գործիքներ, լոգարանք  
մեծ ու պզտիկ եւն. եւն.

ՕԿՆԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐ

Ընկերութեանս օգնական մատակարար Կարապետ  
աղա Սաչլեանի 1891 յունվար 1է մինչեւ 92 1 յուն-  
վար 150ական դրշ. ամսական կը վճարուէր եւ տարե-  
գլխուն 100 դրշ.ի գումար մը նուիրուած է իրեն . իսկ  
92 յունվար ամսէ սկսեալ սոյն գումարը բարձրացու-

ցինք 200 դրշ.ի վարձատրելու համար իւր հաւատարիմ եւ անձնուէր ծառայութիւններն. ուստի 16 ամսուան մէջ Օգն. մատակարարի վճարած եմք հանդերձ տարեկան նուէրովն 2700 դրշ.:

ՀԱՆՈՒՄՆԵՐ

Հաւաքչի պաշտօնն եւս կը կատարէ կարապետ աղա Սաչլեան ըստ անաջնոյն : 7159 դրշ. բաժանորդագրութենէ եւ 216 դրշ. նուիրատուութենէ գոյացեալ դրամի համար 1106 25 դրշ. 15 առ հարիւր տասանորդ վճարուած է հաւաքչի :

ԵՋՐԱԿԱՅՈՅՈՒԹԻՒՆ

Ինչպէս կը տեսնուի ներկայ հասութից եւ ծախուց բացատրութիւններէն եւ ներփակեալ հաշուեկշռէն, ունեցած եմք

Հասութից գումար	դրշ.	35,179	87,5
Ծախուց	„	28,576	25,0
Յաւելեալ գումար	„	6,603	62,5

Արդ ներկայ վիճակնիս է,

Նախորդ շրջանէ մեզ յանձնեալ	16,182	12,5	դրշ.ին
բարդելով այս շրջանի յաւելեալն	6,603	62,5	դրշ.
է պատրաստ յարկեղ	22,785	75,0	դրշ.

Այս գումարը կը մնայ Ընկերութեանս գանձապետ Ստեփան էֆէնտի Քէօսէեանի քով: (Հաշուեցուցակն ներփակեալ կը գտնէք):

Այսպէս, Ատենապետ էֆէնտի, ներկայ շրջանի արդիւնքն որ սակաւ ինչ մխիթարական կը թուի, պարզելով Պատ.Ժողովոյդ, յաւակնութիւն չունիմք հըռ-



չակելու թէ մեր պաշտօնն անթերի կատարած եմք ,  
 բայց կը կարծեմք թէ ըստ կարի սիրտիս եմք հարիւ-  
 րաւոր կարօտեալներ : Ուստի կը խնդրեմք Պատկ. Ժո-  
 զովէզ որ այլ եւս բաւ համարելով մեր պաշտօնավա-  
 րութիւնը հանի նոր ընտրութեան ձեռնարկել անմի-  
 ջապէս եւ կազմել մի Տնօրէն խորհուրդ որ կարենայ  
 ծառայել առաւել քան զմեզ Լ՛նկերութեանս զարգաց-  
 մանս : Կը մաղթեմք որ մեր յաջորդք չպատահին այն  
 վարչական պէս պէս դժուարութեանց որոց բաղխեցաւ  
 Խորհուրդս : \*

Մնամք Յարգանք

ԱՆԴԱՄՔ ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՐԴՈՅ

- |              |                      |
|--------------|----------------------|
| Ա. Արեւ-պետ  | Նասիպ Գարագաշ        |
| Ա. Արեւ-դուբ | Սեն. Յ. Տիշիզեան     |
| Բ. Արեւ-պետ  | Գրիգոր Կ. Սուճեան    |
| Բ. Արեւ-դուբ | Կարապետ Ա. Պարոնեան  |
| Հռչակ-աւ     | Խաչիկ Մ. Խանճեան     |
| Մարտի-բեր    | Գարեգին Ս. Տեմիրճեան |
| Գանձ-պետ     | Ստեփան Մ. Քոսեան     |
| Խորհրդ-աւ    | Գառնիկ Գալստեան      |
| „            | Խաչիկ Մարգարեան      |
| „            | Նշան Զպուզճեան       |
| „            | Արիս Գրիգորեան       |
| „            | Միհրան Պօսեան        |

1 Սեպտ. 1892 Գում-Գարու

# Ընդհանուր

ԱՂՔԱՏԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄ

ՍԿՍԵԱՆ, 1891 ՅՈՒՆՎԱՐ 1Է

## ՊԱՐՏԻ

Բաժանորդագրութեան	7159	
Գանձանակի	8797	250
Պնակի	6244	875
Նուիրատուութեան	1268	
Թասերական ներկայացման	10197	250
Շահ ու զէնի	1518	500
	<u>35179</u>	<u>875</u>

## ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿ

Վերոյիշեալ յաւելեալ գումարը	6603	625
91 Յնվ. 1ին նախորդ Տն. խորհրդէն մեզ յանձնեալ պատրաստ դրամը	16182	125
92 Մայիս 1 պատրաստ դրամ յարկեղ	<u>22785</u>	<u>750</u>
Նախորդ քաջաներէ գնուած կա- րասեաց փոխարժէք որք հետզհետ- ե՛ ջնջելի եւ սպառելի են	1840	50

# հաշուեկէիո

ԳԱՐՈՒԻ ՇՐՋԱԿԱՅ ԶՈՐԻՅ ԹԱՂԻՅ  
 ցՄԻԿ. ՄԱՅԻՍ 1892

ՊԱՀԱՆՁԷ

Բժշկէն	6400	
Գեղերէ	7657	500
Մսէ	5280	750
Կարէ	2448	
Հիւանդաց գանազան ծախսերէ	827	250
Օգնական մասակարարէ	2700	
Հաւաքչէ	1106	250
Կարասեաց նորոգութենէ	224	
Գիւանական ծախսէ	1932	500
Յաւելիալ գումարէ	6603	625
	<u>35179</u>	<u>875</u>

Աղխասաւր Ընկերութեան Տնօրէն Խորհրդոյ  
 սոյն վեշաստանամսեայ Հաշուեցոյցն քննելով եւ  
 տնտեսաց հետ քաղղասելով յար եւ նման զսանձ :

1 Հոկ. 1892 Գում-Գարու

Գիւան Հիմնադրաց Ժողովոյ

Աղխասաւր Ընկերութեան

Ասեմադպիր

Ասեմապետ

ԲԱՐՅՈՂ ՇԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԻ

Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԺՇԿԻՆ

Իմ առաջին հնգամսեայ տեղեկագրէս ետք՝ որ տպագրեցաւ 1889ին Ընկերութեանս ընդհանուր տեղեկագրին մէջ, պատրաստած էի միամսայ տեղեկագիր մը ընականապէս աւելի ընդարձակ, սակայն ցարդ կարելի չեղաւ զայն եւս տալ ի տպագրութիւն. ուստի թոյլ տուք ինձ համառօտիւ ծանօթացնել նախ անոր պարունակութիւնը :

1889—90 տարեշրջանը ամենէն կարեւոր տարին եղաւ մեր գործառնութեան, որովհետեւ աշնան Դեկտեմբեր ամսուան Ինֆլուենցան, կարմրախտը, կեղծմաշկութիւնը եւն. բազմաթիւ հիւանդներ մատակարարեցին մեզ : Եւ արդարեւ, մինչ նախորդ տարեշրջանին մէջ 302 հիւանդ միայն ունեցած էր Ընկերութիւնը, 89—90ին՝ հիւանդաց գումարը կը հասնի 530ի : Ասոնց 70ը, ուրիշ բժշկաց ձեռքով դարմանուած են, գլխաւորաբար մեր ակնաբոյժ պաշտօնակցաց՝ որոնց իմ մասնաւոր շնորհակալիքս կը յայտնեմ աստ : Մնացած 460 հիւանդաց քառասունի չափը անցած տարիէն մնացած է, ուստի անոնց վրայ խօսիլը աւելորդ է :

420 հիւանդաց 125ը 1էն մինչեւ 20 տարեկան եւ 30ը 60էն մինչեւ 85 տարեկան են : Ասկէ կերբւի որ ծեր հիւանդ քիչ ունեցած ենք . պատճառը, ըստ իս, ծերոց նուազութիւնն է առ մեզ. արդարեւ ցաւալի ճշմարտութիւն մ'է որ 60ը անցնող մարդիկ անօր են, իսկ 70ը բոլորողներ գրեթէ մատով կը համրուին :

Տղայ հիւանդ աւելի ունեցած եմք, որովհետեւ նախ՝ քանի մը համաճարակներ որոնք սովորաբար տղայոց յատուկ են, յաճախած են այդ տարի, եւ երկրորդ՝ մանկանց առողջարանութիւնը իսկապէս անծանօթ է դեռ մեր մէջ :

Ըստ սեռի կը բաշխուին մեր հիւանդներն այսպէս . 212 կին եւ 208 այր: Կանանց հիւանդութիւնք գլխաւորաբար արեան նուազութիւն եւ ջգային արկարութիւն են, որոնք բժշկական դարմանէ աւելի առողջարանական դարմանի կը կարօտին:

89—90 տարեշրջանի մեռելութիւնն է մօտաւորապէս 100ին 5, 25 հիւանդ կորուսած լինելով ամբողջ գումարին վրայ: Այս համեմատութիւն գոհացուցիչ է, եւ մի անգամ եւս կը ցուցնէ որ առանին օժանդակութիւնը՝ հիւանդանոցականէն լաւագոյն է, եւ այս սրտհառաւ է որ Փարիզու պէս քաղաք մը որ ամենէն սքանչելի հիւանդանոցներն ունի, զանց չէ ըրած նաեւ առանին նպաստումը, հաստատելով Բարերարութեան Իրւաններ (Bureaux de Bienfaisance):

Գանք այժմ 1890—92 երկամեայ շրջանին: Սոյն ժամանակամիջոցի մէջ դարմանուած են 687 հիւանդ, հետեւեալ կերպով բաժանեալ

90 մայիս 15	— ց 91 մայիս 15	406
91 մայիս 15	— ց 92 մայիս 15	281

Ա. տարւոյ հիւանդք՝ ըստ սեռի,


Արական 207 Իգական 199 — Գումար 406

Բ. տարւոյն հիւանդք՝

Արական 127 Իգական 154 — Գումար 281

Ա. տարւոյն հիւանդաց հիւանդութիւնք՝ ըստ տեսակի,

Հիւանդութիւնք	Հնչառական գործարանաց	150
"	շրջառական գործարանաց	47
"	մարսողական գործարանաց	51
"	ջգային դրութեան	40
"	ծննդական գործարանաց	42
"	զիրարութեան	21



Հիւանդութիւնք ապականիչ արեան (infectieux)	24
„ մորթի	20
„ այլ եւ այլ	7
	<hr/>
	402
Պատուաստ	4

Բ. տարուան հիւանդութիւնք՝	
Հիւանդութիւնք շնչառական գործարանաց	108
„ շրջառական գործարանաց	34
„ մարսողական	26
„ ջրային դրութեան	15
„ ծննդական գործարանաց	28
„ վիրարութեան	17
„ ապականիչք արեան	18
„ մորթի	22
„ այլ եւ այլք	10
	<hr/>
	278
Պատուաստ թուով	3

Ինչպէս կ'երեւի, որչափ որ աշխատած ենք պատուաստը ձրի կերպով կատարել, եւ մինչեւ իսկ լրագրաց մէջ ծանուցումներ հրատարակած ենք, երկու տարուան մէջ եօթը հոգի միայն ներկայացած են պատուաստուելու համար։ Ասոր պատճառը՝ ուրիշ բան չկրնար ըլլալ, բայց եթէ պատուաստի կարեւորութեան մասին աղքատ ժողովրդեան մէջ տիրող սգիտութիւնը։

90—91 տարւոյն մէջ մեռնողներուն թիւն է 11

91—92 „ „ „ „ „ 7

Փոքր մաս մը խրկուած է Աղզ. Հիւանդանոց, Ամենամեծ մասը բժշկուած կամ բարելաւած, իսկ մաս մ'ալ անբուժելի կամ խիստ երկարատեւ հիւանդութիւններով վարակեալ ըլլալով, Յ ամիս խնամուելէ ետք, թողուած է։



Բժշկական տեսակէտով Լ՛նկերութիւնս յառաջիկայ տարւոյն մէջ նոր բարեփոխութեանց ձեռնարկած է :

1. Պատուաստի գործը տարածելու աշխատիլ, ամեն կարելի միջոցներով :

2. Դեղագիրներ պատրաստել այնպիսի ձևով մը՝ յորում կարելի ըլլայ դեղագրին օրինակը համառօտեալ գրել, եւ սնունդը նշանակել զատ թուղթի վրայ, ամեն կարգի թերութեան առաջքը առնելու համար :

3. Կամաւոր ու շրջանն աւարտելու մօտ կարող ուսանողներ ունենալ ձեռքի տակ, որոնք կարեւոր հիւանդներու մօտ երթան առաւօտ երեկոյ ջերմութիւնն առնելու եւ ուրիշ պէտքերը իմանալով բժշկին տեղեկագրելու համար :

Այս նորութիւնք արդէն գործադրուիլ սկսած են կը յուսանք որ, մեր բարեյօժար Տնօրէն Խորհրդոց աջակցութեամբ, Լ՛նկերութիւնս իրապարհ ըսուելու ստուգիլ կ'արժանանայ, որպէս արդէն ուրիշ թաղեցի ազգայինք ոմանք սկսած են այնպէս կոչել զայն :

ՏՕԲԹ. Ռ. ՌՕՊԷՆԱՍՆ







